

# Ոչ ԹՇՆԱՄԱԿԱՆ Հաղորդակցության Մանիֆեստ

## 1. Վիրտուալն իրական է

Համացանցում միայն ասում կամ գրում են այն, ինչը կհամարձակվեի անձամբ արտահայտել.

## 2. Դու այն ես, ինչը հաղորդում ես

Բառերը, որոնք ես ընտրում եմ, խոսում են իմ մասին: Դրանք ներկայացնում են ինձ.

## 3. Բառերը ձևակերպում են իմ մտածելակերպը

Օգտագործում եմ ինձ անհրաժեշտ ամբողջ ժամանակը, լավագույն կերպով ներկայացնելու այն, ինչը մտածում եմ.

## 4. Լսիր մինչ խոսելը

Ոչ ոք չի կարող միշտ ճիշտ լինել, նույնիսկ ոչ՝ ես: Լսում եմ ազնվությամբ և անկեղծությամբ.

## 5. Բառերը կամուրջ են

Ես ընտրում եմ բառերը, որպեսզի հասկանամ, ինձ հասկանալի դարձնեմ և մտերմանամ մյուսներին.

## 6. Բառերը հետևանքներ են պարունակում

Ես գիտակցում եմ, որ իմ արտաբերած ցանկացած բառը մեծ կամ փոքր ազդեցություն կարող է ունենալ.

## 7. Կիսելը պատասխանատվություն է

Կիսվում եմ տեխստերով և նկարներով միայն դրանք կարդալուց, գնահատելուց և հասկանալուց հետո.

## 8. Գաղափարները բննարկելի են.

## Մարդիկ պետք է հարգեն միմյանց

Նա, ով իմ գաղափարները չի կիսում, չեմ համարում թշնամի, ում պետք է բնաջնջել.

## 9. Վիրավորանքը փաստարկ չէ

Չեմ ընդունում վիրավորական կամ ագրեսիվ բառեր, նույնիսկ եթե դրանք կիսում են իմ տեսակետը.

## 10. Նույնիսկ լռությունն է խոսում

Երբ ավելի լավ է լռել, լռում եմ.